# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Հոկտեմբերի 2-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմարտութեանն, այլ՝ վերակացու եմք ճշմարտութեանն» (Բ Կորնթ. ԺԳ 8) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 45):

*Հոկտեմբերի 9-ին, կիրակի. - Ե. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես աբեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամէն ասեմ ձեզ. զի այրին այն փառապեալ՝ շատ արկ քան զամենեսեան որ արկին ի գանձանակն» (Մարկ. ԺԲ 43-44) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 48):

*Հոկտեմբերի 16-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նշան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Հոկտեմբերի 23-ին, կիրակի. - Է. կիր. զկնի Ս. Խաչի՝ Գիւտ Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորայր աբեղա Սիմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Հոկտեմբերի 30-ին, կիրակի. - Ը. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Նոյեմբերի 5-ին, շաբաթ. - Սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:*

Այսօր Մայր Տաճարում, Սուրբ Հրեշտակապետաց Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը:

*Նոյեմբերի 6-ին, կիրակի. - Թ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Մի՛ երկնչիր, միայն հաւատա՝ եւ կեցցէ» (Ղուկ. Ը 51) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 42):

Ս. Պատարագի վերջում կատարվեց Հայրապետական մաղթանք:

*Նոյեմբերի 13-ին, կիրակի. - Ժ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղա Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 55):

*Նոյեմբերի 20-ին, կիրակի. - ԺԱ. կիր. զկնի Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տարոն աբեղա Ղուլիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Պարտ է յամենայն ժամ կալ նոցա աղօթս եւ մի ձանձրանալ» (Ղուկ. ԺԸ 1) բնաբանով քարոզ խոսեց:

*Նոյեմբերի 21-ին, երկուշաբթի. - Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն: Ա. օր Յիսնակաց պահոց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*Նոյեմբերի 27-ին, կիրակի. - Ա. կիր. Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Յազիչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «... զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա» (Ղուկ. ԺԲ 15) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 57):